ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/100

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Դաշտոյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 273.110.1103728)

Ս. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 15.01.2020թ.)

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ՝

Պ. Գաբրիելյանի (լիազորագիր, տրված՝ 15.01.2020թ.)

քննելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի կարիքների համար դագաղների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ռեքվիեմ

Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված (30.12.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/100 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ն 27.12.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է 10.12.2019թ. «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) 1-ին չափաբաժնին: Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի 25.12.2019թ. տեղի են ունեցել բանակցություններ: Բանակցություններին մասնակցել են «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» և «Գանգրահեր տղա» ՍՊ ընկերությունները: «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն իր նախնական գնային առաջարկում որպես ինքնարժեք ներկայացրել է 450 000 ՀՀ դրամ: Սակայն բանակցությունների ընթացքում նվազեցրել է այն մինչև 375 000 ՀՀ դրամ: 25.12.2019թ. թիվ 3 արձանագրությամբ և 26.12.2019թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը բանակցության ընթացքում նվազեցրել է գինն առանց ինքնարժեքի գնի փոփոխման՝ համաձայն Օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի (Մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկը, որում առաջարկվող գինն ապրանքների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:): Եթե «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ի կողմից չխախտվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասը, ապա Ընկերությունը կհամարվեր ընտրված մասնակից՝ համաձայն Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, որի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.1., 2.2. և 2.3. կետերով և 26.12.2019թ. հրապարակված պայմանագիր կնքելու հայտարարությամբ կայացված «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները.

2. Պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին վերանայել ընթացակարգի հաջորդաբար տեղեր զբաղեցնելու մասին որոշումը և ընտրված մասնակից ճանաչել «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ին:

«Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.01.2020թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 15.01.2020թ. թիվ 05 գրությամբ հայտել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ը դագաղների գնման նպատակով կազմակերպել և իրականացրել է «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2019-12-10 10:05:28-ից մինչև 2019-12-17 11:30:00 ժամը ներառյալ:

«ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն, «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2 որոշմամբ մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով և հաշվի առնելով այն

հանգամանը, որ գնման գործընթացն իրականացվել է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով, գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Բանակցությունների մեկնարկը տրվել է 2019 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 15:30-ին, որը սղագրվել է հանձնաժողովի քարտուղարի կողմից: Բանակցությունների ավարտից հետո մասնակիցների կողմից Պատվիրատուին տրամադրվել են բանակցությունների արդյունքում ձևավորված նոր գնային առաջարկներ, որը ներկայացվում է ստորև.

Հ/հ	Մասնակցի անունը	Մասնակցի կողմից առաջարկված գները (ՀՀ դրամ), ընդ որում՝			
		Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1					
1	«ԳԱՆԳՐԱՀԵՐ ՏՂԱ» ՍՊԸ	375000	25000	0	400000
2	«ՌԵՔՎԻԵՄ ԻՆՏԵՐՆԵՇՆԼ» ՍՊԸ	350000	98000	0	448000

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 3 որոշմամբ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և սահմանվել է անգործության ժամկետ:

Վերը նշված գործողությունները կատարելով ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ը նպատակ է ունեցել իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում ձեռքբերել կարիքին համապատասխան ծառայություններ՝ համարժեք հատուցմամբ, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման եղանակով: Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն հիմնվել է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության

խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ուսումնասիրելով «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված բողոքը, Պատվիրատուն գտնում է, որ «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները.

1. «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից միաժամանակյա բանակցությունների ընթացքում առանց ինքնարժեքի փոփոխությամբ ձևավորված նոր գնային առաջարկի ներկայացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցի իրավունքն է և դա չի բխում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթներից:

2. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով սահմանվում է, որ «Հրավերը պետք է պարունակի՝ .....նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.», որն իրականացվել է գնման ընթացակարգի մասնակիցների կողմից մասնակցության հայտերը ներկայացնելիս:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:»:

4. Ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում (տնտեսական պայմանների, տարբեր գործիքների և այլնի փոփոխությամբ պայմանավորված) մասնակցության հայտերը ներկայացնելու օրվա և դրան հաջորդող բանակցությունների վարման օրվա միջև ընկած ժամանակահատվածում ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինքնարժեքի փոփոխությամբ պայմանավորված՝ մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ (ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով) ներկայացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ընկալման և մեկնաբանման տարբերություններից, Պատվիրատուն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և խնդրել է «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.01.2020թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/100 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/100 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի 15.01.2020թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են,

բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի «Մշակույթ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՉՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն և «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ն:

«Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որում **<u>ինքնարժեքը նշվել է 450 000 ՀՀ դրամ</u>, շահույթը՝ 50 000 ՀՀ դրամ, ԱԱՀ-ն 0 ՀՀ դրամ, ընդհանուր գինը՝ 500 000 ՀՀ դրամ:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշել է նիստը կասեցնել և

ծանուցել բավարար գնահատված մասնակիցներին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ հրավիրելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ի կողմից գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում առաջարկվել է հետևյալ գնային առաջարկը՝ **<u>ինքնարժեք՝ 375 000 ՀՀ դրամ</u>, շահույթ՝ 25 000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 0 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 400 000 ՀՀ դրամ:**

Նույն արձանագրության համաձայն՝ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ն որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված և սահմանվել է պայմանագիր կնքելու անգործության ժամկետ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 5-րդ կետի 5.1 ենթակետով սահմանվել է, որ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և **<u>չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:</u>** Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ի կողմից ի սկզբանե հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է **<u>450 000 ՀՀ դրամ</u>**, որը սակայն հետագայում մասնակցի կողմից նվազեցվել է **(<u>375 000 ՀՀ դրամ</u>)** գների շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում, ինչը սակայն գտնում եմ, որ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներին, քանի որ նշված նորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել նույն կետով սահմանված ծախսերի ինքնարժեքից, որը և ի սկզբանե ներկայացվել է մասնակցի կողմից հայտով: Հետևաբար միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից չի կարող նվազեցվել գնային

առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, քանի որ դա կարող է հանգեցնել նաև գնումների գործընթացի շրջանակներում ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մրցակցության խրախուսման, գնումների գործընթացի մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված՝ Ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին պահանջին, գտնում եմ, որ բողոքը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչում է ընթացակարգի գնահատող հանձնաժողովը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ի կողմից 27.12.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՁՀ-ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը.

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ռեքվիեմ Ինտերնեշնլ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**